

ափն ծովու, բանակեալ զգաւառան Այրայրատեան: 22 Ապա հասեալ Վասակ հանդերձ գնդան՝ որ ընդ իւրն էին, անկաներ ի վերայ բանակին թագաւորին Պարսից ի գիշերի յեղակարծումն ժամանակի: 23 Եւ անդէն առ հասարակ ընդ սուր հանէին զգաւրսն ամենայն Պարսից. բայց միայն թագաւորն միաձի ճողոպրեալ մագապուր փախչէր: 24 Չհետ հալածէին զմնացեալսն փախուցեալսն արտաքոյ իւրեանց սահմանացն, եւ թափէին ի նոցանէ աւար բազում եւ անթիւ, զի ոչ գոյր նոցա չափ համարոյ: 25 Եւ առ հասարակ արկանէին զնոսա ի սուր սուսերի իւրեանց, եւ թափէին ի նոցանէն զոսկերս թագաւորացն իւրեանց, զոր Պարսիկք խաղացուցեալ տանէին ի գերութիւն յաշխարհն Պարսից: 26 Չի ասէին ըստ իւրեանց հեթանոսութեանն ըստ արինացն, թէ վասն այսորիկ բարձեալ տանիմք զոսկերս թագաւորացն Յայոց յաշխարհն մեր, զի փառք թագաւորացն եւ բախտքն եւ քաջութիւն աշխարհիս աստի զնացեալ ընդ ոսկերս թագաւորացն՝ յաշխարհն մեր եկեսցեն: 27 Ապա թափեր Վասակ զգերութիւնն ամենայն զՀայաստան աշխարհին. եւ զոսկերս թագաւորացն Յայոց, զորս թափեաց Վասակ, հանեալ թաղեցին յամուր ի գեղն՝ որ Աղձքն անուանին, յԱյրարատ գաւառին՝ որ կայն ի խինձս ի գոգս ի ծոցս յանձուկս ի դժուարս լերինն մեծի, զոր Արագածն կոչեն: 28 Եւ ինքեանք փոյթ արարեալ զաշխարհ նուաճել, յարդարել կարգել յարինել շինել զամենայն զգերութիւն յաւերածոյն եւ այրեցածոյն: 29 Բայց յայնմ նուագի եւս ապրեր Մերուժանն չարագործն, փախուցեալ ընդ արքային Պարսից: 30 Եւ յայնմ հետե պահ ունէին իւրեանց աշխարհին. արքայն Արշակ հանդերձ զաւրավարան Վասակաւ յերկոսին դուրս սահմանացն զգուշանային մինչեւ զամենայն աւուրս կենդանութեան իւրեանց:

ԳԼՈՒԽ ԻԵ.

1 Յաղագս թէ զհարդ արշաւեաց արքայն Արշակ յերկիրն Պարսից, եւ քանդէր եւ հարկաներ զբանակն Շապիոյ արքային ի Թաւրէշ:

2 Ապա զաւրաժողով լինէր Արշակ արքայ Յայոց, եւ կուտէր առ ինքն զաւրս բազումս իբրեւ զաւագ բազմութեամբ, եւ խաղայր ի վերայ աշխարհին Պարսից: 3 Ապա առնոյր Վասակ զգունդն Յայոց, եւ զՀոնսն հանդերձ Ալանաւքն կոչել յաւգնականութիւն, եւ հասանէր դիմէր յաւգնականութիւն թագաւորութեանն Յայոց ի վերայ Պարսից: 4 Այլ թագաւորն Պարսից հանդերձ ամենայն իւրովք զաւրաւքն ի ժամանակի անդ յայնմիկ քանզի եւ նա խաղացեալ գայր ի վերայ Հայաստան երկրին ընդդէմ սոցա, ապա սոքա փութացեալք հասանէին յԱտրպատական, եւ գտանէին զբանակն արքային Պարսից ի Թաւրէշ բանակեալ:

5 Հասանէր Վասակ սպարապետն հանդերձ քսան բիւրուքն, անկանէր ի վերայ բանակին Պարսից: 6 Միաձի ճողոպրեալ թագաւորն փախչէր, եւ առ-